

1.2.7. Կազմակերպությունների գործունեության վիճակը 1999 թվականին

1.2.7.1. Կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքները

Ըստ նախնական տվյալների, հանրապետության մոտ 1300 խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքների բացասական հաշվենացորդը 1999թ., փաստացի գներով, կազմել է 108182,3 մլն. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից ստացված վնասը կազմել է 128625,3 մլն. դրամ:

Կազմակերպությունների շահույթի (վնասի) ցուցանիշներն ըստ տնտեսության հիմնական ճյուղերի բնութագրվում են հետևյալ տվյալներով.

մլն. դրամ

	1999թ.					
	Շահույթի (+) վնասի (-) հաշվենացորդը	այդ թվում				
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ, վնաս (-)		Գործառնական եկամուտներ, ծախսեր (-)	Ինվեստիցիոն գործունեության արդյունքը	Ֆինանսական գործունեության արդյունքը	Արտակարգ (անկանխատեսելի) գործունեության արդյունքը	
Ընդամենը	-108182.3	-128625.3	12794.7	15209.9	-6509.9	-1051.7
<i>այդ թվում՝</i>						
Արդյունաբերություն	5901.0	-9502.9	7229.8	10625.3	-2312.2	-139.0
Էլեկտրոէներգիայի, գազի, շոգու և տաք ջրի նատակարարում	-124808.8	-121891.8	-2411.0	658.2	-1163.7	-0.5
Շինարարություն	-364.5	-54.6	-301.6	30.8	-4.7	-34.4
Տրանսպորտ	-170.0	-1858.2	867.6	-29.3	732.5	117.4
Կապ	9435.3	12288.8	-1295.8	79.4	-1637.1	0

Տնտեսական գործունեության նշված 5 ճյուղերի կազմակերպությունների 50,6%-ը 1999թ. տարեկան արդյունքներն ամփոփել են 39089,8 մլն. դրամի շահույթով, իսկ 49,4%-ը 149096,8 մլն. դրամի վնասով:

Վնասով են աշխատել ընդամենը կազմակերպությունների 49,3%-ը (155827,9 մլն. դրամ), որից 127949,9 մլն. դրամի վնասը կամ 82,1%-ը բաժին է ընկել էներգետիկ համակարգի կազմակերպություններին:

Միաժամանակ, ուսումնասիրված 1300 առևտրային կազմակերպությունների զուտ վնասը 1999թ. տվյալներով կազմել է 171546,8 մլն. դրամ, նախորդ տարվա 17673,0 մլն. դրամի դիմաց: